



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1079

613.5

U-70

6

Թ. ԸՆԿ. Հ. ԳՐԳ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ.

(69)

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՂ ԵՒ ԽՈՒՆԱԻ

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՈՒՍԱՆ. Հ. Ա. ԱՌԱՔԵԼԵԱՆՑ.

12.002

2010

Թ Ի Յ Լ Ի Ս

ՅՈՂԱՆՆԵՍ ՄԱՐԻՏԻՄԵՆԵՆԻ ԶՊԱՐԱՆՈՒՄ.

613.5
4-70

80


16227
010
010-0

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Дозволено Цензурою. Тифлисъ 29 Сентября 1880 г.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Типог. Мартиросіанца, на Орбеліановской улицѣ. д. № 5

ԱՅԿ

Թ. Ը. Հ. Գ. Հր. խմբագր. յանձնաժողովի կողմից:

Առաջարկեալ առողջապահական գրուածք պ. Առաքելեանը թարգմանել էր «Ատերբուրի մուզէումի գործնական գիտութիւններ ժողովրդի մէջ տարածող յանձնաժողովի աշխատութիւնները» Գոհա Շնչէլի ժողովրդական ընթերցանութիւնը:

Յանձնաժողովս կարևոր դատեց և պարտք համարեց այս թարգմանութիւնը, որքան կարելի էր, հաջ ժողովրդի հասկացողութեան և ընթերցանութեան շնորհից, դուրս թողնելով գրուածից զանազան կտորներ, մտցնելով նորանոր չաւերածներ, հարկաւոր բացատրութիւններ և փոփոխութիւններ. միով բանիւ, այս գրուածք ներկայանում է հաջ ընթերցողներին ոչ իբրև թարգմանութիւն, այլ քննարկական:



ԳՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին



Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին
Գրականության մասին հարցազրույցի մասին

ՆԵՂ ԵՒ ԽՈՆՎԱԼ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՐԳԻՆ
ԵՒ ԹԷ ԻՆՉՊԷՍ ՆՈՅԱ ՄԷՋ
ՄԵՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ ՊԱՀՊԱՆԵՆՔ:

Քժիշկների զխողութիւններից պարզ երևում է, որ
ամենից շատ այն մարդիկն են հիւանդանում ու մեռնում,
որ կենում են նեղ և խոնավ (նամ) տների մէջ: Հիմա տես-
նենք թէ՛ այդ նեղ և խոնավ բնակարանների մէջ ինչն է
մարդու այդքան վնաս տալիս: Արդեօք դորա դէմ մի
ճար ու դարման չկայ: Հէնց դորա մասին ուզում եմ ձեզ
հետ խօսել:

Նեղ և խոնավ բնակարանների մէջ մարդկանց հիւ-
անդանալու ամենամեծ պատճառն այն է, որ այդպիսի
բնակարանների մէջ օդը միշտ ապականուած է լինում:
Ամենքս դիտենք որ օդի մէջ ենք ապրում, բայց մեզանից
շատերը չեն իմանում թէ՛ այդ օդը որքան մեզ հարկա-
ւոր է: Նա մեզ — հացից, կերակուրից էլ աւելի հար-
կաւոր է: Ինչպէս որ ձուկը չի կարող ապրել առանց ջրի,
այնպէս էլ մենք չենք կարող ապրել առանց օդի: Մարդ
կարող է ամբողջ 8 օր մնալ առանց ուտելու ու խմելու,
բայց առանց օդի մի րոպէ անգամ չի կարող մնալ: Եթէ
ուզում էք ձեր բերանն ու քիթը հուպ սուռէք, այնպէս

որ շունչ քաշել չկարողանաք, և խփոյն կը տեսնէք կէս
 ըրպէից, շատ — շատ մի ըրպէից յետոյ, որ քիչ է մնում
 ճաքէք (պայթէք): Ամեն օր 2—3 անգամ հաց ենք ու-
 տում և այդ մեզ բաւական է լինում, որ քաղցած չմնանք,
 բայց ամեն օր 18—20 անգամ օդ ենք ներս շնչում
 կամ ծծում և աւելորդ օդը դուրս — շնչում (արտաշնչում):
 Եթէ ուշադրութիւն դարձնենք, կարող ենք ճշտութեամբ
 համրել ամեն ըրպէի մեր շնչառութիւնը մեր կուրծքի
 ելևէջով (բարձրանալ և ցածրանալով): Անասունների հա-
 մար նոյնպէս օդը հարկաւոր է, ինչպէս մարդկանց — նրանք
 էլ չեն կարող առանց օդի ապրել:

Պարենն թէ մեզ մարդկանցս և թէ անասուններին
 օդը շատ հարկաւոր է: Հիմա հարցնենք, ի՞նչու հա-
 մար այդքան հարկաւոր է օդը: Սորա պատասխանը լաւ
 հասկացնելու համար, պէտք է ձեզ փոքր ինչ պատմեմ՝
 թէ ի՞նչ է մաքուր օդը, ի՞նչ կայ նորս մէջ կամ ինչե՛նց
 է նա բաղկացած:

Օդը մենք ոչ կարողանում ենք տեսնել, ոչ էլ բռնել
 կամ շոշափել: Աշխարհին մէջ այդպէս տարածուած նիւ-
 թեր շատ կան, դոցա ասում են օդային նիւթեր կամ
 ֆայեր: Իսկը ծուխի նման մի բան է, բայց այնքան պարզ,
 որ տեսնել չենք կարողանում: Օրինակ՝ վառելու գազը, որ
 կարելի է վառել, բայց չէ կարելի տեսնել կամ շոշափել:
 Օդն էլ բաղկացած է գլխաւորապէս երկու տեսակ գազերից.
 դոցանից մէկը օդի մէջ (մտաւորապէս հաշուելով) չորս
 անգամ քիչ է միւսից: Հէնց այդ գազը, որ աւելի քիչ է
 օդի մէջ, ամենահարկաւոր բանն է մարդկանց և անասուն-
 ների համար, այդ գազի անունը լեւոսածին է. եթէ օդի
 մէջ թթուածին քիչ կայ կամ ամենևին չկայ, այն ժա-

մանակ թէ մարդ և թէ անասուն չեն կարող ապրել:
 Հիմա տեսնենք թէ ինչու համար թթուածինը մեր
 մարմնի համար այդքան հարկաւոր է: Մարդուս, ինչպէս
 և անասունին, կարելի է մի գործարանի (գալօդի) կամ
 ֆարրիկի նմանեցնել մեր միտքը պարզելու համար:

Ասենք, օրինակ, որ դուք մետաքս (աբրշում) պատ-
 րաստելու մի գործարան ունէք: (Մենք իմանում ենք, որ
 մեր երկրներում, ինչպէս Ղարաբաղում, Նրեանի կողմե-
 լում և այլն, ամեն օր հարիւրաւոր աղքատ կնանիք,
 տղերք և աղջկերք գնում են այդ գործարանների մէջ
 աշխատելու, կամ, ինչպէս իրանք են ասում, «բարսմայ
 ընարելու»): Եթէ ուղում ենք որ այդ գործարանը իւր
 կարգին զնայ, պէտք է որ նորան միշտ հասցնենք «բարս-
 մայ», փայտ, ջուր և ուրիշ հարկաւոր նիւթեր, այն
 ժամանակ գործարանը մեզ համար կը պատրաստի մե-
 տաքսի (աբրշումի) թել: Յետոյ հարկաւոր է նոյնպէս, որ
 գործարանից միշտ դուրս տանն անպէտք և աւելորդ բա-
 ները կամ, ինչպէս ասում են, «փարը»: Մարդն էլ հէնց այդ-
 պէս է: Ինչպէս ապրելու համար պէտք է նորան պաշար
 հասցնենք — հաց, ջուր և այլն, հարկաւոր է նմանապէս
 որ նորա մարմնից հեռացուին՝ դուրս ձգուին անպէտք
 մնացորդները, այսինքն աղբը: Բայց որպէս զև գործա-
 րանը գործ կատարէ, ամենազլխաւոր բանն այն է, որ նո-
 րա մէջի ջուրը տաքացնեն, կրակ վառեն, իսկ առանց օդի
 կամ ուղիղն ասած՝ առանց թթուածնի ոչ մի կրակ չի
 վառուիլ, ոչ մի բան չի այրուիլ: Եթէ թթուածին չլի-
 նէր օդի մէջ, այն ժամանակ ոչ մամը կը վառուէր, ոչ ու-
 րիշ նիւթերը: Եթէ ուղենաք ձեր վառարանը կամ թո-
 նիրը վառեցէք և այդ վառարանի դուռը կամ թոնիրի

օգաքարչը (սինդուս) պինդ փակեցէք և դուք կը տեսնէք որ կրակը հանգչում է, պատճառ որ թթուածնին օդի հետ մանելու տեղ չկայ: Վառեցէք մի ցածր կտոր մում և նորա վերայ մի գրուանդան կամ ապակեայ բաժակ դրէք, կողքերից պինդ փակեցէք, որ դրսից էլ օդ չմտնի, դուք կը տեսնէք որ առաջ ճրագի լոյսը սկսում է քշանալ և յետոյ բոլորովին հանգչում է. պատճառն այն է որ քանի ծածկոցի տակ եղած օդի մէջ թթուածին կար, ճրագը վառուում էր, բայց հէնց որ վերջացաւ՝ ճրագն էլ հանգաւ: Բաժակի տակ էլն գաղ մնաց—այդ է օդի միւս շատ մասը—**ազոթ** (բորակածինը), բայց այս նիւթը վառելու չի նպաստում, սորա մէջ ամեն կրակ հանգչումէ: Սա խառնուած է օդի մէջ՝ կասէք թէ՛ թթուածնի կրակոտ, տաքացնող զօրութիւնը բարեխառնելու համար: Թթուածինը մի այնպիսի գաղ է, որ ոչ գոյն ունի, ոչ հոտ և ոչ համ: Նա ինքը չէ վառուում, բայց վառուած բանին օգնում է այրուելու: Մաքուր թթուածնի մէջ մինչև անգամ տաքացած երկաթը, պղինձը, կապարը (արծիձը) վառուում են և այրում:

Ուրեմն՝ գործարանի նման մարդուս կազմուածքն էլ իւր գործողութիւնը կատարելու համար կարօտութիւն ունի թթուածնի, որ թոքերում՝ իբրև վառարանի մէջ՝ միշտ տաքութիւն է յառաջ բերում, և այդ տաքութիւնը որոշեալ աստիճան ունի. այդ բանը դուք ամենքդ կարող էք տեսնել Վերցրէք ջերմաչափը¹⁾ և ձեռքի մէջ կամ կռան տակ բռնեցէք, կը տեսնէք որ սնդիկը (ժիվայ) սկսում է բարձրանալ և մի փոքր ժամանակից յետոյ 37

¹⁾ Տաքութիւն չափելու գործիք:

աստիճան է՝ ցոյց տալի: Բայց եթէ ջերմաչափը սենեակի մէջ կախէք, նա 15 աստիճան ցոյց կը տայ: Ուրեմն մարդուս մարմնի տաքութիւնը 37 աստիճան է, իսկ դրսի օդինը 15: Սորանից պարզ երևում է որ մարդուս մէջ մի բան վառուում է և նորան տաքացնում: Այդ տաքութեան աստիճանը մարդու մէջ այնքան հաստատ է լինում, որ բժիշկները դորանից՝ իմանում են մարդուս հիւանդ կամ առողջ լինելը, հիւանդութեան թեթև կամ ծանր լինելը:

Հիւանդ մարդու այդ ներքին տաքութիւնը 37—37,5 աստիճանից աւելի է լինում: Եթէ ջերմաչափը մի մարդու տաքութիւնը 38 աստիճանից աւելի է ցոյց տալի, ուրեմն նա անպատճառ հիւանդ է, եթէ 40 աստիճան է ցոյց տալի, նա ծանր հիւանդ է. իսկ եթէ 41—կամ 41,5 աստիճան է, հիւանդի զրութիւնը միանգամայն վտանգաւոր կարելի է համարել, այդ սակ է որ կազմուածքի մեքենան շատ սաստիկ և արագ է գնում և շուտով բոլորովին կը քանդուի:

Երբ որ շատ մարդիկ մի քանի ժամ մի փոքր սենեակում նստեն կամ ամբողջ զիշեր այնտեղ քնեն և սենեակի մէջ թարմ օդ քիչ մտնէ, նոքա սենեակի օդից թթուածնի շատ մասը ծծում են, զորանով մնացած օդը վատանում է և վնասակար դառնում: Հէնց այդ է մինը այն պատճառներից՝ թէ ինչու օդը ապականում է բազմամարդ սենեակների մէջ: Բացի դոցանից էլ ուրիշ շատ կարևոր պատճառներ կան, որոնք ես հիմա կը բացատրեմ:

Ես առաջ յայտնեցի որ մարդուս մէջ թոքերը վառարանի պաշտօն են կատարում, բայց դուք գիտէք որ միշտ, երբ մի բան է այրում, ծուխ է լինում: մարդուս

Թոքերի մէջ նոյնպէս ծուխ է լինում և այդ ծուխը դուրս է գալիս բերանից արտաշնչելիս, միայն թէ այդ ծուխը այնքան թափանցիկ է և մաքուր, որ մենք նորան չենք տեսնում: Արեւի է համոզուել որ արտաշնչելիս մենք մեր կրծքից դուրս ենք թողնում մի օդային նիւթ, որից ամենեւին մեր ծծած օդի մէջ չկայ: Լքցնենք շէշի մէջ առանձին պատրաստուած մի հեղուկ (կրի ջուր), պարզ ինչպէս հասարակ ջուրը, եթէ այդ ջրի մէջ մեր բերանով շունչ փչենք, այն ժամանակ ջուրը կըսպիտականայ (կաթի գոյն կըստանայ): Այն ի՞նչ էր որ մենք մեր թոքերից արտաշնչեցինք: Ի հարկէ դուք խնայաք, որ այդ գազ էր: Բայց բանն այն է, որ այդ գազը ամենեւին նման չէ թթուածնին: Այդ գազը մի ուրիշ անուն ունի—ածխաթթուածնի: Նորանից շատ կայ հասարակ ծուխի մէջ: Ուրեմն մեր մարմնից անխաթառ է դուրս գալիս և եթէ նորանից շատ հաւաքուի մեր արիւնի և մարմնի ուրիշ մասերի մէջ, մենք կը մեռնինք, ինչպէս որ չէինք կարող սպրիւ և ծուխի մէջ: Եթէ անխաթառը հաւաքենք մի ամանում և այդ ամանի մէջ մի որ և իցէ անասուն դնենք, օրինակ, կատու, շուն կամ մի թռչուն, մենք կը տեսնենք որ նա իսկոյն կը սատկի:

Արը յիշած բորակածնի նման այդ անխաթառը տաքութիւն չի տալի և առհասարակ մարմիններ այրելու չի նպաստում: Փայտի մի մարխ կամ տաշեղ վառենք և մտցնենք անխաթառութեամբ լիքը ամանի մէջ, իսկոյն վառուածը կը հանգչի: Այդ անխաթառութեամբ գազը օդից ծանր է, այդ պատճառով երբ մեր մարմնից դուրս է գալիս, հաւաքուում է ներքեւ յատակի կամ գետնի վերայ: Այս ասածիս լաւ միտ դարձրէք, որովհետեւ ձեզ շատ

հարկաւոր է այդ բանը իմանալ, որպէս զի դուք թողնէք ձեր վատ սովորութիւնը ուղղակի յատակի վրայ անկողին փռելու և պառկելու՝ շատ հոգի մի սենեակում: Զերարտաշնչած անխաթառութեամբ հաւաքուած ներքեւ և դուք այդ անպիտան օդն էք ծծում: Այն ինչ՝ եթէ բարձր թախտերի կամ մահճակալների վերայ պառկէք, դուք աւելի մաքուր օդի մէջ կը լինիք, քան ներքեւումը: Ուրեմն առհասարակ օդը սպականուում է այն սենեակների մէջ, որտեղ շատ մարդիկ են նստում կամ կենում, որովհետեւ սոքա շատ անխաթառութեամբ են արտաշնչում, որ հաւաքուելով սենեակի օդի մէջ փաստկար է դառնում:

Փոքր բնակարաններում օդի սպականուելուն մի երբորդ պատճառն էլ այն է, որ բացի անխաթառութեամբից, մենք արտաշնչում ենք ուրիշ աւելորդ նիւթեր ևս: Եթէ հարբած մարդկանց հետ խօսել էք, անշուշտ ձեր քթին արողի (օդի) մի թունը հոտ է փչել: (Նորա նման էլ կերակուրների մէջ շատ կծու նիւթեր կան, այդ կծու նիւթերը արեան կամ թոքերի միջոցով դուրս են գալիս մեր մարմնից և խառնուում սենեակի օդի մէջ): Ի հարկէ եթէ մի սենեակի մէջ շատ մարդիկ կան, այդ կծու նիւթերից աւելի շատ կը հաւաքուին և օդն էլ սաստիկ կ'սպականուի: Եթէ դրսի թարմ օդից մտնենք մի սենեակ, որտեղ շատ մարդ կայ, մենք մի առանձին կծու վատթար հոտ կ'զգանք:

Բայց ես ձեզ պէտք է ասեմ, որ այդ կծու հոտը մի ուրիշ պատճառից էլ է գոյանում, այսինքն քրտինքից:

Ամեն մարդ զիտէ որ մենք քրտնում ենք և այնքան շատ, որքան շատ աշխատում ենք, նոյնպէս ամեն մարդ զիտէ որ քրտինքի հոտը վատ է լինում: Քրտինքի այդ

վատ հոտը նորանից է դոյանում, որ կաշուից, ինչպէս և թոքերից դուրս են գալիս շատ կծու նիւթեր, որոնք բուրովին անպէտք են մեր մարմնի համար: Այդ նիւթերը շատ շուտով փտում են և հոտում, եթէ տաք և խոնաւ տեղ են մնում, իսկ ինչ որ փտում է վատ հոտ է ունենում, օրինակ, հոտած միսը, փտած ձուկը կամ նեխուած ձուն: Հէնց այդ պատճառով ոտի մատերի մէջտեղ մնացած քրտինքը շատ վատ և կծու հոտ է ունենում: Այն քրտինքը, որ ասի կաշու մէջ դուրս է գալիս, այնտեղ մնում է ամբողջ օրը՝ առաւօտից մինչև գիշեր, պատճառ որ ոտքերը գուլպայի և կօշիկի մէջ լաւ փաթաթուած են լինում և քրտինքի կծու նիւթերը չեն կարողանում դուրս գալ այնտեղից, ինչպէս դուրս են գալիս մեր մարմնի միւս մասերից. իսկ որովհետև ոտերի մէջ և տաք է լինում և խոնաւ, ուստի այդ նիւթերը շուտով նեխում են և հոտում: Հիմա հասկանում էք, որ երբ ձեզանից շատերը գալիս էք տուն հանում էք ձեր կօշիկները և գուլպաները և մաքրում էք մատերի մէջտեղերը, ինչ վատ հոտով և վնասակար նիւթով լքցնում էք օդը, մանաւանդ եթէ այդ օրը շատ էք ման եկել:

Չարունակներ քննել այլ ևս պատճառներ, որ սաստիկ ապականում են օդը: Գոցա մէջ զլխաւորներն են խոնաւութիւնը և փոշին (թող): Փոշին բերում ենք տուն մեր հագուստների, մանաւանդ կօշիկների վերայ:

Բայց կեղտոտութիւններ և ուրիշ անմաքրութիւնները ամենից շատ հաւաքւում են պատերի վերայ, անկիւնների և մանաւանդ անկողինների, որոնց ամբողջ բաթներով թափ չեն տալիս և արեգակի տակ չեն փրուում: Բայց անմաքրութեան զլխաւոր տարածողները լի-

նում են անհասկացող և կեղտոտութիւն սիրող տանտիկիները, որոնք սենեակը միշտ մաքուր չեն պահում, մանաւանդ աղքատները և զիւղացիք, այնտեղ ուր կերակուր են պատրաստում, մսի կտորներ, ոսկորներ, հացի փշրանքներ և ուրիշ մնացորդներ են թողնում, դոքա էլ շուտով նեխում են և վարակում ու ապականում օդը:

Խոնաւութիւնը նորանով վնասակար է որ, խոնաւ բնակարաններում այդպիսի անմաքրութիւնները աւելի շուտով են փտում, քան թէ չոր տեղերում, այդ էլ նորանից է յառաջանում, որ խոնաւ բնակարանների մէջ օդը քիչ է մաքրւում, այսինքն՝ թթուածին քիչ է լինում, իսկ վնասակար գազեր շատ: Մեր բնակարանների մէջ պատերի և ուրիշ ճեղքերի միջով թարմ օդ է մտնում, դորանով օդը մաքրւում է. հիմա եթէ պատերը խոնաւ են, բոլոր ծակոտիքը ջրով լցուած է, էլ օդը չի կարող նոցա միջոցն անցնել, և ՚ի հարկէ այդ շատ վնասակար է:

Խոնաւութիւնը ուրիշ միջոցներով էլ է շատ վնաս տալիս, բայց այդ յետոյ կը բացատրեմ ձեզ, երբ որ հիւանդութիւնների մասին կը խօսեմ: Սենեակի մէջ օդը կարող է ապականուիլ և նորանից, որ չեն կարողանում ինչպէս պէտքն է վառել և տաքացնել սենեակը: Յայտնի է որ շատ տեղ մեր հայ գիւղերում տները լուսամուտներ չունին, այլ երդիկ: Շատ անգամ, մանաւանդ ձմեռ ժամանակ, զիւղացիք մեծ օջախ են վառում երդիկի տակ, իրենք չորս կողմը նստում և խորովածի շամփուրներ քաշում: Ծուխը լքցւում է սենեակը, խորովածի հոտն էլ մի կողմիցն է ընկնում, յետոյ մսի կտորներն էլ այստեղ այնտեղ թափւում, տան կնանիքն էլ աւելով սրբում են և պուճախներում (անկիւններում) հաւաքում, ջուրն էլ

շաղ տալիս հօդի վերայ. թէ գորանից որքան վնասներ են առաջանում, հեշտ է հասկանալ, ինչու որ այն պուճախներում հաւաքած բաները ջրի աղբեցութեամբ փոռում են, հոտում ու օդը ապականում, և տան մարդիկն էլ այդպիսի վարակուած օդը ծծելով ծուխի հետ միասին իրենց արիւնի մէջ, փչացնում են իւրեանց անողջութիւնը: Իսկ քաղաքներում աղքատ ընտանիքները ձմեռը մահալը կրակ են ձգում, դնում դռանը որ յետոյ ներս բերեն, բայց շատ անգամ չեն թողնում որ ածուխը լաւ կպչի «սէօ» դառնայ (կրակը չաղանայ) և այնպէս ներս են բերում, ահա այդպիսի կրակի մէջ շատ վնասակար գազեր են լինում, բայց այդ գազերից ամենավնասակարը ածխաթթուան է¹⁾ (ածուխի հոտն) է: Նոյնպէս եթէ «սորս» կրակը լաւ կպած (կաս-կարմրած) չլինի, կամ երկաթէ վառարանը դեռ լաւ չվառուած փակուի, դարձեալ շատ վնաս կը լինի: Ետ անգամ պատահում է որ մի այդպիսի սենեակում շատ մարդիկ քնում են, և առաւօտը հազիւ երկու երեքը կարողանում են մահից պրծնել: Ածխաթթուան գազը վառարանից կամ քուրսու կրակից տարածում է սենեակի մէջ և նորա մէջ քնած մարդիկ օդի հետ միասին ծծում են այդ գազը. այդպէս նա մտնելով թոքերի, արիւնի մէջ, ապականում է նորան, և այդ արիւնի հետ միատեղ մտնում է ուղեղի մէջ և այնպէս վնասում է ուղեղը, որ մարդ էլ չի կարողանում ապրել: Այդ այն է որ ասում են թէ «գործրով է ընկեր» կամ «ածուխը տուել է»: Եթէ շուտ խմանում են և ածուխից հիւանդացածներին դուրս հանում թարմ օդի մէջ, նոքա ազատում

¹⁾ Ածուխի գրտիկը (կողմնակից) և այլն.

են: պատահում է որ ածխահոտը սաստիկ չէ լինում, այդպիսի ժամանակ թէև քիչ չեն մեռնում, բայց էլի սաստիկ զլխացաւ են ունենում և մի երկու օր ոչինչի պէտք չեն գալիս:

Այս էլ պէտք է ասած, որ ածխաթթուակ գազը դուրս է գալիս և երկաթէ վառարանից (սորաից) մինչև անգամ այն ժամանակ, երբ խողովակը ծածկուած չէ, պատճառ որ երբ վառարանի երկաթեայ պատերը կարմրում են (կեծանում), իրանց միջով բաց են թողնում գազը: Ի հարկէ այն բոլոր վնասակար գազերը, որ լինում են վառարանում, կարող են տարածուել սենեակի մէջ և ճրագներից, այսինքն մոմի, նաւթի վառելուց և այլն: Ամենից շատ այդ վնասակար գազերը հաւաքում են այն սենեակում, որտեղ վառում են ճարպի (ճրագուի) մոմ և նաւթ:

Անողջութեան համար Խոտակոյ գազերը կարող են մտնել սենեակի մէջ ոչ թէ միայն վերոյիշեալ պատճառներից, այլ և գետնի և տախտակամածի միջով, եթէ, օրինակ, սենեակի մօտ որսահարկեր կամ կոյանոցներ կան:

Օդը ապականում է նոյնպէս Փարբիկների և գործարանների մէջ, ինչպէս և արհեստաւորների խանութներում, որտեղ շատ հոտող ապրանք են կուտած (գիլած) լինում, օրինակ, կաշի կամ ուրիշ ուտելիղէններ, ձուկն և այլն: Այդ ապականութիւնը մեծ աղբեցութիւն ունի մշակների կամ առհասարակ բանւորների անողջութեան և երկարակեցութեան վերայ: Օրինակ այն գործաւորները, որոնք զանազան հանքերում կամ ածխահանքում բանում են, հազիւ 45 տարուց աւելի են ապրում և, մեռնելուց յետոյ, նրանց թոքերը ածուխի պէս սև են լինում:

Պղնձագործները, ոսկերիչները շատ անգամ մի տեսակ հիւ-
 ւանդութիւնից են տանջուում, ինչու որ նորա բանեղիս
 պղնձի, արծճի, ցինկի և սնդիկի փոշի են ծծում, այդ
 փոշին հաւաքուում է սենեակի մէջ, ոչ ոք նորա վերայ
 ուշք չէ դարձնում և սենեակը քամու չեն տալիս, օդը
 չեն մաքրում, իսկ մարդիկ նորա մէջ յիշեալ նիւթերից
 փոքր առ փոքր թոււաւորումեն:

Այսպէս մենք տեսնում ենք, որ օդը ապականուում
 է մեր բնակարաններում շատ և շատ պատճառներից: Հէնց
 օդի այդ ապականութիւնն է շատ հիւանդութիւնների
 պատճառ դառնում, այդ բանի վերայ ամենեւին պէտք չէ
 տարակուսիլ: Դօկտ. Նմուլեվիչը, օրինակ, պատմում է
 թէ՛ երկար ժամանակ դիտել էր 2 տուն, որտեղ բան-
 տարկեալներ էին պահում: Իրանք այդ բանտերի մէջ և
 աշխատում էին: Երկու տների մէջ ևս նրանց մի տեսակ
 էին կերակրում, հազցնում, միատեսակ էին բանեցնում,
 բայց էլն այդ տներից մէկի մէջ 3 անգամ աւելի էին մեռ-
 նում: քան թէ մեւտում: Պատճառն ի՞նչ էր. — Այդ տներից
 մէկը այնպէս էր շինուած, որ նորա մէջ օդը միշտ փո-
 փոխուում էր, անմաքուր օդը միշտ դուրս էր գնում, իսկ
 նորա տեղ մաքուր օդ էր դալիս, մի խօսքով տունը լաւ
 հողմաշորում էր: Բայց միւս տունը այդպէս չէր, պատու-
 հանները միշտ փակուած էին, օդը չէր փոփոխուում, այն-
 տեղի բնակողներն էլ աւելի շատ էին մեռնում: Մի ուրիշ
 ապացոյց էլ առաջ բերեմ: Մի 40 տարի սորանից առաջ,
 երբ որ ուշադրութիւն չէին դարձնում ձիանների ախոռ-
 ների վերայ և կարծում էին թէ միևնոյն է՝ ինչ տեսակ
 որ շինեն այդ բնակարանները, հեծելազօրքի մէջ 1000
 ձիաններից մօտ 300ը սատկում էին զանազան հիւանդու-

թիւններից: Հիմա էլ մեր զիւղացիք այնպէս են շինում
 իւրեանց ոչխարանոցը, ձիանոցը, որ Աստուած աղափ,
 մութ, խոնաւ. շատերն էլ նոյն իսկ քաղաքացիներից կար-
 ծում են թէ ձին միայն այն ժամանակ լաւ ձի կը դառ-
 նայ, երբ որ նորան Աստուծոյ լոյսից զօրեւ, դորա համար
 նորա ձիանոցի ամեն ծակ ու ծուկը (անցքերը) բռնում
 են և չեն թողնում որ մէկ տեղից օդ մտնի: Բայց հիմա
 երբ շատ տեղ հասկացել են, որ ձիուն էլ, ինչպէս և
 մարդուս, հարկաւոր է մաքուր օդ, սկսել են լոյս և մա-
 քուր ու ընդարձակ ձիանոցներ շինել, լուսամուտներով, և
 տեսնում են որ հիմա 1000-ից 50-ն է սատկում: Ի հարկէ
 այստեղ մի ուրիշ պատճառ չկայ, ինչու որ առաջ էլ
 ձիաներին դարի և դարման (յարդ) էին տալիս, հիմա էլ
 ուրեմն՝ պատճառն օդն է: Առաջ 6 անգամ աւելի էին
 սատկում, քան թէ հիմա, միայն նորա համար, որ ախոռ-
 ների մէջ օդը մաքուր չէր, եւ թէ ձիաները այդպէս
 զգայուն են դէպի ճահոր օդը և արեզակի լոյսը, ինչ ա-
 սել կուզի որ մարդկանց կազմուածքին առաւել թուալե
 կըլինի դոցա պակասութիւնը:

Օդի պակասութիւնից յառաջ են գալիս ամենից
 շատ երկու հիւանդութիւն. խոլերա և բուրսուկոյա: Խոլը
 ախտի ենթարկուած մարդը սպրթնում է (զոււնթափ-
 ւում է), բոլոր կաշին շատ անգամ ծածկուում է թեփով,
 խոլերի ուռոյցքներով, վէրքերով և խոցերով: Այդ խո-
 ցերը շատ դժուարութեամբ են լաւանում և բժշկուում
 ապականուած օդի մէջ: Վերջապէս խուլախտից յառա-
 ջանում է և աչքացաւ որ շատ երկար է տևում: Բարա-
 կացաւ (սիլը) մի այնպիսի ախտ է, որ թոքերը հետրդ-
 հետէ մաշում է, այնպէս որ վերջում էլ տեղ չէ մնում

1002
 1666



կանոնաւոր շնչառութեան: Հիւանդը սաստիկ հազում է, արիւն է դալիս խորհի (խորիւի) հետ, դիշերները քրտնում է, համարեա միշտ տաքութեան մէջ է լինում և այլն:

Ապականուած օդից գոյանում է և սկորբութ¹⁾ կոչուած հիւանդութիւնը: Այդ հիւանդութիւնը հեշտ կարելի է իմանալ նորանով, որ ընդերքը շատ թոյլ են լինում, հազիւ մի թեթեւ ձեռք ես տալիս կամ շփում ես, իսկոյն արիւնը սկսում է վազել: Մարմնի վրայ արեան բիծեր են յառաջ գալի և այլն:

Շատ բժիշկներ հաստատում են նոյնպէս, որ ապականուած և նամ օդը երեսայոց մէջ անգլխիւն կոչուած հիւանդութիւն կամ ակրոպա է տարածում: Այդ հիւանդութեան նշանները այն է, որ երեսայի ոսկրները կակղանում են և ծուռում, դորանից ոտքերը և ձեռքերը ծրուռում են, մանաւանդ ամենից շատ ծուռում է ողնաշարը (մէջքի սիւնը) և երեսայք կուզեկանում են:

Ի հարկէ այս բոլոր հիւանդութիւնները որոնց մասին ես խօսեցի, միմիայն նորանից չեն յառաջանում որ օդը ապականուած է լինում, այլ և նորանից, որ կերակուրը առողջ, անդարար չէ լինում, կամ շատ անգամ այնպիսի տներ կան, որ ամիսներով մնի և ուրիշ սննդաբար կերակուրների երես չեն տեսնում, կամ թէ նորանից յառաջանում որ տան մէջ շատ ցուրտ է լինում, կամ նորանից որ խեղճ մարդիկ երկար և դժնդակ կերպով աշխատում են և վերջապէս էլի ուրիշ շատ պատճառներից են յառաջանում, բայց դարձեալ այդ հիւանդութիւնների գլխաւոր պատճառը — ապականուած օդն է:

1) Յարապե և արեւնահոս լնտերացաւ — ցինդա:

Շատ տարիներ առաջ Եւրոպայում հասարակ ժողովրդի կերակուրը հիմնականից աւելի պակաս չէր կամ վատ, բայց այն ժամանակեթէ մի տեղ մի հիւանդութիւն էր երևում մանգաղի նման հնձում էր մարդկանց և այնքան զոհեր էր անում որ թուել անկարելի է: Խնչ պատճառով այդպէս էր. այն պատճառով որ տները շինում էին առանց բնակիչների առողջութեան վերայ ուշադրութիւն դարձնելու, փողոցները նեղ էին, այնպէս որ նոցա մէջ ապականուած օդը սակաւ էր շարժում և անմաքուր մնում: Նոյն իսկ բնակիչները այդ բանին օգնում էին իւրեանց անմաքութիւնները փողոցն ածելով:

Բացի այս ամենը, նեղ բնակարանների մէջ սարող մարդիկ աստուծոյ շահ-շահ հիւանդանում են ծաղիւղ, կարմիր-իւղ, Խեֆայուղ, խօչըրայուղ և էլի ուրիշ վարակիչ և փոխուող հիւանդութիւններով:

Մի քանի գիտուններ հաստատում են որ տարափոխիկ և վարակիչ հիւանդութիւնները յառաջանում են նորանից, որ մեր մարմնի մէջ օդի և կերակուրի հետ միասին մտնում են աննկատելի փոքր կենդանիների և բոյսերի սաղմեր, որոնք և ծնեցնում են մեր մէջ այդ հիւանդութիւնները: Այդ կենդանիները այնքան փոքր են, որ նոցա հասարակ աչքով չի կարելի տեսնել, բայց եթէ խոշորացոյցով¹⁾ մտիկ տանք, այն ժամանակ շատ լաւ կը տեսնենք:

Այդ կենդանիների և բոյսերի սաղմերը զանազան են լինում, նայելով հիւանդութեանց տեսակին: Նոքա

1) Անձացնող ապակիներից շինած գործիք, որ ամենամանր աննկատելի փոշին էլ մինչև 1000—2000 անգամ մեծացնելով ցոյց է տալի:

չատ շուտ ամճում են և բազմանում, այնպէս, որ կարճ միջոցում մէկից հազարն է դուրս գալիս: Բայց այդ սաղմերը ամենից շատ ամճում և ապրում են այնպիսի տեղերում, ուր շատ կեղտոտ, փտող նիւթեր կան և որտեղ խոնաւ է: Մենք ամենքս գիտենք, որ երբ հացը, գինին և այլն վաշնում է կամ բորբոսնում, նոցա վերայ մի տեսակ ծուղի է հասում:

Թէ այդ և թէ խոնաւ պատերի վրայ կապած բորբոսների կամ ծաղկի մէջ յիշած հիւանդութեանց սաղմեր շատ են յառաջ գալի, որ իբրև մանր փոշի կամնոց-կամնոց խառնուելով օդին՝ մտնում են մարդկանց թոքերի մէջ և վարակում արիւնը, կամ կերակրների և ջրի հետ կուլ գնալով թոյլ և տկար մարդկանց կազմուածքը աւելի շուտ հիւանդացնում են:

Այս է պատճառը որ երբ մի տեղ յայտնուում է տիֆո (վարցաւք) կամ խօլերայ, ամենից շատ այդ հիւանդութիւններից բռնուում են կեղտոտ տների խեղճ բնակիչները: Այդպիսի կեղտոտ տներ, մանաւանդ գիւղերում մեր մէջ շատ-շատ են: Թահահոտութիւնը մի վերատից հեռու կարելի է առնել որովհետև այդ տները տներ չեն, այլ գոմեր (ախոռներ), միայն նոցա վերևի մասում մի տեղ կայ մարդկանց նըստելու համար, որ ռոգայօ է կոչուում: Այդպիսի տեղում օդը միշտ ապականուած է լինում կենդանեաց աղտեղութիւններից, արտաշնչութիւնից և այլն, և այդ ապականուած օդը ծծում են գիւղացիք: Հէնց հիւանդութիւններն էլ այդպիսի տեղերի են ման գալիս և երբ նոքա մեր գիւղացիների վզին են կպչում, սրանք էլ ձարները կրտրած ասում են թէ Աստուած թէ պատիժ է ուղարկել աւելի լաւ կը լինէր եթէ ասէին Աստուած թէ անհարմարութեան համար

է թէ պատիժ է: Այսպէս մեր թշուառութիւնների պատճառը մեծ մասամբ մեր անհասկացողութիւնն է, եթէ ոչ, Աստուած չի ուզի որ իւր արարածները զուր տեղը փչանան, մեռնեն:

Պառք կարող էք կարծել որ ես ձեզ վախեցնում եմ, որովհետև եթէ օդի ապականութիւնը այդպէս մեծ չարիք լինէր, մենք ամենքս պէտք է այն ժամանակ միշտ հիւանդ լինէինք, ինչու որ օդը պէտք է միշտ վառանայ մեր բնակարանների մէջ վերոյիշեալ պատճառներով: Բայց այդպէս չէ: Մեր բնակարանների մէջ օդը միշտ մաքրուում է ինքնիրեն: Նախ՝ որ միշտ դռները բացուում են և թարմ օդ է մտնում, երկրորդ՝ թարմ օդը միշտ մտնում է պատերի և լուսամուտների ճեղքերի միջոցով, որ մենք չենք նկատում, երրորդ օդը մաքրուում է վառարանների և ծխնելոյգների միջոցով¹⁾: Աւրեմն սենեակի մէջ եղած օդը ինքն իրեն միշտ մաքրուում է և նորա տեղը փողոցից թարմ օդ է գալիս, իսկ փողոցի օդը միշտ մաքրուում է կամ քամուց, կամ անձրևից, ձիւնից և կամ որոտումի ժամանակ: Ասում են որ կայծակի ժամանակ մանաւանդ մաքրուում է օդը, այդ ճշմարիտ է, որ կայծակների ժամանակ թթուածինը մի առանձին փոփոխութիւն է ստանում (օշոն է դառնում), և մի քանի գիտնականներ ասում են թէ՛ իբրև սա ոչնչացնում է զանազան տեսակ հարուց և փառլ վարակիչ նիւթերը:

Մենք արդէն ասացինք թէ՛ հիւանդութեանց սաղմերը խոնաւ և անմաքուր բնակարանների մէջ մէկ որ յա-

¹⁾ Երանի թէ խոնաւ բնակարաններում ծխնելոյգները միշտ փոքր աս փոքր վառուած պահուէին:

առջ Գան, այնուհետև միշտ աճում են և զարգանում: Հիւանդանոցներում դորա առաջն առնում են, ամեն օր սենեակները քամու տալով և դանազան օդը մաքրող նիւթեր օդի մէջ ցնդելով կամ ծխելով. անկողինները հիւանդների առողջանալուց յետոյ լաւ թափ են տալիս, արևի առաջ են ձգում, կամ բոլորովին ոչնչացնում են (այրում են), կեղտոտութիւնները, աղբերը հեռացնում են, ամանները լաւ լուանում են, մի խօսքով՝ հիւանդանոցներում չեն թողնում որ այդ վնասակար կենդանիների և բոյսերի սաղմերը ¹⁾ շատանան: Բայց ի հարկէ մասնաւոր անե-
րում, որտեղ այդ գոլուշութիւնները չեն դործ դնում, ոչ մի բան չէ արգելում սաղմերի աճելուն ու բազմանա-
լուն. նոքա այդպիսի տեղերում լաւ ապրում են ու լաւ էլ շատանում: Ուրեմն մենք պէտք է աշխատենք նոցա անհետացնել և մեր տներից դուրս անել Հիմա դուք ին-
ձանից կարող էք հարցնել ուրեմն ի՞նչ անենք, ի՞նչ միջոցներ գործադրենք, որ մեզ այդ հիւանդութիւններից պահպանենք:

Պորա պատասխանը եւ կարող էի ձեզ ասել թէ՛

Պէտք է ջանք անել շատ և մեծ բնտանիքներ միա-
սին չապրեն մէ անուկի մէջ. աւելի լաւ է խնայողութիւն անել մի ուրիշ բանի համար, բայց ոչ բնակարանի համար: Ամենք հասկանում են, որ որքան քիչ մարդիկ կենան մի սենեակում, այնքան և շատ օր կենին ամէն մէկին, ուրեմն և այնքան քիչ կարող է ապականուել օդը:

1) Յաւալի է ասել, բայց կան հիւանդանոցներ, ուր ծառայողները այդ ամեն գոլուշութիւնները օդը մաքրելու համար անխղճաբար չեն դործ դնում, ինչպէս հարկն է:

Պէտք չէ ապրել անմիջապէս գետի եզերքում շե-
նուած տներում, նեղ փողոցների մօտ, մանաւանդ գոր-
ծարանների մօտ, վերջապէս պէտք չէ ապրել նոր շինած
տներում: Պորա պատճառները հեշտ է հասկանալ: Վետի
եզերքում շինուած տները միշտ խոնաւ են լինում, այն
պատճառով որ ջուրը հիւրում ծծւում է պատերից, նեղ
փողոցներում շինուած տները առ հասարակ դուրկ են
արեգակի լոյսից և տաքութիւնից և այդ է պատճառ
լինում, որ բնակարանների մէջ խոնաւութիւնը, փտու-
թիւնը և ժահահոտութիւնը չեն անհետանում, Փաբրի-
կաներից և գործարաններից միշտ ծուխ է դուրս գալիս
և էլ յայնպիսի դարչահոտութիւններ, որ խոնաւելով
օդին վնասում են առողջութեան: Վերջապէս նոր
տները միշտ խոնաւ կը լինին, եթէ նիւթերը, որոն-
ցից տունը շինուած է, դեռ չեն չորացել և այնպիսի նիւ-
թեր էլ կան որ շատ ուշ են չորանում: Պէտք է ջանք
անել մանաւանդ որ տանը շատ մօտ չլինին արտաբնոց-
ները, որովհետև նոցանից շատ հիւանդութիւններ են յա-
ռաջանում, — սաստիկ փորհարինք, գեղնութիւն թու-
լութիւն և արիւնասակաւութիւն:

Ես կարող էի այսպիսի խրատներ էլ լի շատ տալ,
բայց ես գիտեմ որ դոքա անօգուտ են, ինչու որ այդ
խրատներին հետևելը այնպիսի բնակարան ձարել որ ամեն
կողմից յարմար լինի, այդ անկարելի բան է չքաւորների
համար. այդ միայն հարուստները կարող են և ոչ աղ-
քատները: Ուստի ես միայն մի քանի խորհուրդ կը տամ
նոցա, որոնք ստիպուած են բնակել անյարմար և խոնաւ
տներում:

Տուն մտնելուց առաջ, պէտք է շորերը լաւ թափ

տալ մանաւանդ կօշիկները լաւ սրբել իսկ եթէ շորերը թռչուած են, պէտք չէ ամենեւին չորայնել այն սէշուհո՛ւմ, որտեղ կենում են, նոյնպէս կեղտոտ շորերը, մանաւանդ փոքր երեխայոց շորերը չպէտք է պահել այն սենեակում, որտեղ ուտում կամ քնում են, այլ միշտ պէտք է մի առանձին տեղ պահել: Եթէ կարելի է, պէտք է զիշերը փոխել շապիկը, իսկ ցերեկուայ շապիկը կախ տալ քամուտակ: Որպէս զի ներքնաշապիկը թաց չլինի քրտնքից, տաք հագնուած, այսինքն բոլոր շորերը հագին չպէտք է թէյ խմել և ոչ էլ հաց ուտել կամ, աւելի պարզ ասնք, տան մէջ չպէտք է այնպէս հագնուած լինել, ինչպէս դուրսը փողոցում, որովհետեւ առանց այն էլ քրտնքը պժուար է դուրս գալիս, նա կը մնայ այնտեղ և կը փախ: Մանաւանդ կանայք պէտք է սաստիկ մաքրութիւն պահեն, այսինքն ամեն օր պէտք է ամեն տեղից թողը փոշին մաքրեն, անկողինները գոնէ շաբաթը մի անգամ թափ տան և դուրսը փռեն, ջուր չթափեն տան մէջ հողի վերայ, սենեակի մէջ երկար ժամանակ չթողնեն կերակուրի մնացորդները, աւելուքը. միշտ տախտակները և սեղանները լուանան, մանաւանդ այն տախտակները, որոնց վերայ միս բան են դնում և կերակուր են պատրաստում: Ամենեւին չպէտք է տափի վերայ քնել կամ ցածր թախտերի վերայ, ինչպէս վերևը բացատրեցինք թէ՛ մեր մարմնից դուրս եկած ածխած թուութիւնը շատ ծանր գազ է, ուտի և միշտ տափի վերայ է իջնում և մենք, որ տափի վերայ քնած ենք լինում, ներս ենք շնչում աւելորդաբար այդ վնասակար գազը:

Բայց որքան էլ որ մաքրութիւն պահենք, օդը չի կարող այնպէս մաքուր լինել, ինչպէս հարկաւոր է, դորս

համար պէտք է սենեակը միշտ քամու տալ: Եթէ լուսամուտները օդանցք ունին, դորանից էլ լաւ բան չկայ, այն ժամանակ պէտք է օրը 2 անգամ բացանել, ամեն անգամ գոնէ 5 րոպէ, իսկ եթէ շատ ցուրտ չէ դուրսը՝ մի ժամ —: Բայց եթէ օդանցք չկայ, պէտք է լուսամուտի վերայ մի քառանկիւնի բացուածքում ապակու տեղ թիթեղ (ժեստ) դնել, որ ծակծկած լինի հաշի նման, և այդ ծակոտած թիթեղը բաց թողնել: Այդպիսով օդը աւելի մաքուր կը լինի, ցրտից էլ չպէտք է վախենալ, պատճառը որ ցուրտը այն վնասը ամենեւին չի կարող տալ ինչ որ ապականուած օդը կարող է տալ: Շատ հիւանդութիւններ, որ կարծում են թէ մրսելուց են յառաջանում, իրականապէս միայն անմաքուր օդից են դոյանում:

Խոնաւ բնակարանները չորայնելու միակ միջոցը նորան քամու տալն է: Ինչ տեսակ էլ որ խոնաւ լինի բնակարանը կամ բոլորովին նոր շինած, բայց եթէ լաւ հողս տանեն, 6 շաբաթում կամ 2 ամսում կարող է չորանալ պատճառը որ օդը մտնելով սենեակի մէջ և դուրս գալով իւր հետ տանում է պատերի բոլոր խոնաւութիւնը: Սենեակի օդի շարժողութեան և փոփոխութեան համար այդ դէպքերում ամենակարևորն է վառարաններում փոքր առ փոքր միշտ կրակ պահել և նոցա խողովակներն ու բերանները բաց թողնել:

Պարձեալ պէտք է պատերի մօտ ամենեւին կահ կարասիք կամ ուրիշ բաներ չդնել, որպէս զի պատերը կարողանան ազատ օդահարուել կահ կարասիքը պէտք է պատերից գոնէ մի քառորդ արշին հեռու շարել:

Այստեղ պէտք է ասել, որ եթէ տան մէջ խոնաւութիւն է ընկել և սենեակները թղթած են, պէտք

է թղթերը գծել (վերցնել) պատից և պատերը սպիտակացնել: Թղթած բնակարանը շատ ուշ կը չորանայ: Նոյն պէս պէտք չէ խոնաւ տան պատերը ներկել, ինչու որ ներկից փոշի է բարձրանում, խառնում է օդի հետ և սորա հետ միասին մտնում է թոքերի մէջ, այստեղից արիւնի մէջ և կամաց—կամաց թունաւորում է մարդու, որովհետեւ այդ ներկերի մեծ մասի մէջ թոյն է լինում, օրինակ, կանաչ դեղը որ մկնդեղի (մարկամուշի) խառնուրդ ունի իւր մէջ և այլն:

2 պէտք է թողնել որ պատերը բորբոսնեն (վաշեն), բայց ՚ի հարկէ դորա դէմ ոչինչ չի կարելի անել, եթէ պատերը խոնաւ են:

3 Ետոյ ես խորհուրդ կը տայի սենեակի օդը մաքրելու համար մի հասարակ, շատ աժան, բայց ընտիր միջոց գործ դնել—այդ ածուխն է (անձող): Նրբ որ վառարանի մէջ կրակը փոքր կտրի ու սկսի վայր նստել, այն ժամանակ պէտք է հանել մի երկու ածուխի մեծ կտորներ, թողնել դրսումը որ սառի և յետոյ մանր թակել, երկու երեք լայն ամանի մէջ լքցնել և տան անկիւններում (պուճախներում) շարել: Այդ ինչպէս (փոշի) արտաւաճ ածուխը կուլ է տալիս օդի մէջ հաւաքուած վնասակար գազերը, ինչպէս և այն մանր կենդանիների և բոյսերի վնասակար սաղմերը, բայց ՚ի հարկէ, երբ որ այդ գազերից շատ հաւաքուի ածուխի մէջ, այնպէս որ նա կշտանայ և էլ չկարողանայ կուլ տալ, այն ժամանակ այդ ածուխը էլ պէտք չէ այլ և վնասակար էլ է, ինչու որ նորա մէջ հաւաքուած նիւթերը սկսում են փտել, այդ պատճառով հարկաւոր է երկու շաբաթը մի անգամ ածուխը փոխել կամ միւլնոյն ածուխը սաղի վերայ լաւ պատշենել—կրկին այրել:

այդ աւելի լաւ կը լինի: **Ե**թէ սենեակի մէջ մի քանի ժամանակ հիւանդ է պարկել և եթէ հիւանդութիւնը եղել է վարակիչ, այսինքն վարցաւք (տիֆո), խօլերայ (ժանտախտ) կամ ծաղիկ և այլն, այն ժամանակ մանաւանդ պէտք է առանձին հոգ տանել սենեակը լաւ յտակելու: Այդ հիւանդութիւնից յետոյ պէտք է սպիտակ արջասպր ¹⁾ ջրի հետ հաւրել և հիւանդի հազի շորերը նորա մէջ թռչոց դնել: Այդ արջասպր երկու տեսակ կայ և ծախուում է խառնութիւններում աժան գնով, մէկ տեսակը մաքրուած չէ, իսկ միւս տեսակը մաքրուած և զտուած է, երկու տեսակն ևս կարելի է գործածել, բայց ՚ի հարկէ մաքրուածը աւելի լաւ է: Միայն պէտք է ջրի մէկ վեղրօ (բուլայ) ջուր վեր առնել և ³/₄ դրվանքայ արջասպր: Սենեակին էլ պէտք է քացախով լաւ ծխել և քամու տալ: Քացախ ծխել կը նշանակէ լաւ տաքացրած խտակ աղիւսի վրայ քիչ-քիչ քացախ ածել և այդ կերպ սենեակներում քացախի գուրշիքը տարածել:

4 Խօլերայի ժամանակ հիւանդի փսխածի և կղկղանքի վերայ պէտք է ածել ամեն անգամ 4 բաժակ ջրի մէջ հարած ¹/₄ զրով չափաւ որջասպր (զաճը) և փոքր լինէլ, եթէ պատահի, կարբօլի կամ ֆենօլի թթու ¹/₂ մսխալ որ աժան ծախուած դեղարաններում: Պէտք է անկողնու մահճակալի մէջ եղած դարմանը (յարդը) կամ բուրդը այրել մահճակալը պէտք է օձառով (սպորնով) և ջրով հարած սպիտակ արջասպրով լուանալ: Արջասպր պէտք է տան պատերը նորից սպիտակացնել, որովհետեւ պատերը

¹⁾ Չինկայն ծծմբատ:

իրանց վրայ անտարակոյս վարակիչ նիւթեր են պահում:

Առհասարակ՝ վարակիչ հիւանդների կղկղանքը մեծ մեծ է անինամաբար դուրս թափելը, այլ՝ պէտք է անպատճառ առանձին որոշած արտաքնոցներում լցնել և ամեն անգամ բոլոր կղկղանքի վրայ մի վեղբո (քուբայ) ջրի մէջ հարած 3 գրվանքայ կանաչ արջասպ (զաճ՝) ածել¹⁾ և ամեն երկու երեք օրը այդ արտաքնոցը գոցել: այսինքն՝ գետինը փորել և արջասպի հետ խառնուած կղկղանքի վրայ կիր ածել և խոր թաղել չոր հողի տակ: նորից մի ուրիշ փոս բաց անել իբրև առանձին արտաքնոց և այնտեղ մի երկու օր հիւանդի կղկղանքը ածել արջասպով և այն, ինչպէս ասացինք, և դարձեալ թաղել բոլորը:

Լա կըլինէր, որ այս միևնոյն զգուշութիւնները բանեցնուէին և ժանտախտներից ազատ ժամանակ աների արտաքնոցների վերաբերութեամբ: հոգս տանէին գոնեա շաբաթը մի անգամ վերը յիշածս կերպով արջասպ ածել արտաքնոցի փոսերում և յետոյ կղկղանքը բոլոր դուրս տանել դաշտերում թաղելու: անշուշտ մեր խօսքը այն տեղերի համար է, ուր չկան արտաքնոցներ մաքրող կանոնաւոր ջրանցքներ:

Ի հարկէ այս բոլոր բաները, որ ես խորհուրդ տուի ձեզ, չնչին մանր-մոնր բաներ կ'երևան, բայց շատ հարկաւոր են: Այդ չնչին բաները գործ դնելով դուք շատ թշուառութեանց առաջը կ'առնէք: Այս մանր-մոնր բաներն են, որ իրականապէս մեր հիւանդութիւնների գըլ-խաւոր պատճառն են: Մի պոչաւոր աստղ է երևում եր-

¹⁾ Ուր որ գեղարան (ապօտեք) կայ, պէտք է տանել կարբօլի թթու 3 միկալ և խառնել 3 գրվ. արջասպին:

կնքի վերայ կամ մի երկրաշարժ է լինում: իսկ դորանից յետոյ եթէ մի ժանտախտ է պատահում, ասում էք այդ պոչաւոր աստղը կամ երկրաշարժն է մեղաւոր: ոչ, մեղաւորը մենք ենք, մենք, մեր կեղտաութիւնը, մեր ընտանեկան կեանքով, մենք որ ուշք չենք դարձնում այն հանդամանքների վերայ, որոնք առաջին անգամից մեզ չնչին են երևում: Բայց եթէ հոգս տանենք այդ չնչին բաների վերայ, էլ այնքան շատ, համարեա կ'իտով չսփի, չենք հիւանդանալ և նոյնիսկ պատահած հիւանդութիւններն էլ այնքան ծանր չեն լինիլ ինչպէս հիմա: Ուրեմն՝ պէտք է միշտ սովորենք և հետեւենք առողջապահութեան:




... (faint, illegible text)

Մամուլի տակից ցարդ դուրս են եկել
և վաճառվում են թիֆլիսի բոլոր գրավա-
ձառների մօտ ընկերութեան հետևեալ
տպագրութիւնները:

Քաւամազ մեղու. թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի	40 կ.
Կարմիր լապտեր. թարգ. օր. Ն. » »	50 —
— — նոյնը առանց կազմի »	30 —
Թովմաս եղբօր տնակ. թարգ. օր. Ն. »	60 —
Մանկական երգեր, Գամառ Քաթիրայի. կազմած	25 —
— — նոյնը առանց կազմի . . .	15 —
Մորեխ և նորան ջնջելու հնարները. Տէր-Բար- սեղեան	10 —
Ուսումնարանների առողջապահութեան հարցեր. բժ. Ա. Բարայեան	1 ո.
Կրքեր և նոցա ազդեցութիւնը առողջութեան վրայ բժ. Ա. Բարայեան	30 —

Վերոյիշեալ գրքերը ընկերութեան պահեստից (Ատա-
մանակի փողոց, Կվեատկովսկի տուն) և Կենտրոնական գը-
րավաճառանոցից գումարով գնողներին զեղջ կը լինի:



Կենտրոնական գրավաճառանոցում
վաճառվում են ի միջի այլոց հետևեալ
Հայերէն գրքերը:

Կոմբ. բժ. Խնամատարութիւն երեխայոց մարմ- նական և բարոյական.	60 կ.
Առողջապահութիւն և տաճումն առաջին ման- կութեան	40 —
Բոկ. Ուսումն առողջապահութեան	35 —
Ռէյս. Ինչպէս պահպանել և բժշկել երեխա- ների աչքերը.	25 —
Մինաս Չերազ. Գրական փորձեր	1 ո.
» » Ազգային դաստիարակութիւն. 1 ո.	
» » Հայաստան և Խոսալիա	60 —
Խրիմեան. Վանգոյժ	20 —
» Սիրաք և Սամուէլ. բարի հօր կըր- թական դասեր	1 ո. 25 —
Օրմանեան. Միութիւն հայութեան	45 —
Հրանտ Ասատուր. Սահմանադրութիւն և հայ ժողովուրդն	35 —
Հրանտ Ասատուր. Պատանեկան ներշնչումներ. Սրուանձտեանց. Մանանայ	1 ո. 75 —
» Թորոս աղբար, Հայաստանի ճամբորդ	1 ո. 25 —
Միանսարեանց. Քնար հայկական	1 ո. 50 —
Պատմութիւն Ռուսիոյնի Քախլոժէ	1 ո. 75 —
Հոֆման. Հաւատարմութիւնը ամեն արգելք- ների յաղթումէ	40 —

Հոֆման. Խաւարից դէպի լոյս	40 կ.
» Ռնէ	40 —
» Բարեկամութեան զոհեր	60 —
Գևորգ Ռօլլեստօն	60 —
Սերվանտէս. Գօն Քիշօս	70 —
Պէտրուսէ. Գստերք առաքինիք	25 —
Ֆրանքլին. փորձառու Բիշարի խրատները կամ Հարստանալու միջոց	15 —
Ռսկի ասեղներ—Հէքիաթ	10 —
Էակիդէ. Երրորդ ոսկի	15 —
Երկու բարեկամներ	25 —
Քիշմիշեան. Գրօջօ և կրակի շուրջը	30 —
Աբովեանց. Պարսպ վախտի խաղաղք	30 —
Պարտիզակցի. Հայկական յիննակ առակ	60 —
Պէրպէրեան. Նուէր կաղանդի	65 —
Փաղրաբանութիւնն. Նասր-էտտին խօջայի	25 —

Օտարաբաղաբացիք պէտքէ վճարեն և ճանապարհի
 ծախք. իսկ եթէ գնած գրքերի արժողութիւնը 25 ռ.
 հասնի, ճանապարհի ծախքը գրախանութն է վճարում.
 Հասցէն „Въ Тифлисъ, въ Центральную книжную
 торговлю.“

— 67	
— 68	
— 69	
— 70	
— 71	
— 72	

1079

Գինն է 10 կոպ.

2013

«Ազգային գրադարան»



NL0071694

